շաւղի մէջ դրած լինէր, նրան այնպիսի ուղղութիւն տոած լինէր, որ նա վերջապէս հասկանար, թէ որքա՜ն վատ է օտարի կոպիտ ուժի տակ ճնշոած դրութիւնը, թէ որքա՜ն լաւ է իր սեփական հողի վրայ իր քրտինքով ազատ ապրելը. — մեր գործը շատ հեշտ առաջ կերթար...

Բայց ովքե՞ր են մեր ժողովրդի առաջնորդող անձինքը: — Մենք ազնուապետական դաս չունենք, մենք ունենք վաճառականներ եւ եկեղեցականներ: Վաճառականները, այլ խօսքով դրամատէրերը. դուք գիտէք, ի՜նչ տեսակ հրէշներ են. մնում են եկեղեցականները, որոնց ձեռքումն է ժողովրդի կրթութիւնը եւ նրա բարոյական եւ մտաւոր դաստիարակութիւնը: Եկեղեցականը, ո՛ր ազգի մէջ եւ լինէր նա, միշտ ընդդէմ է մարդկային անհատական ազատութեան: Եկեղեցականը միշտ ընդդէմ է ազգայնութեան գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրօնքի անունով. նրա «հոտի» մէջ «խուժդուժ, սկիւթացի եւ յոյն» — բոլորը մէկ են: Եկեղեցականը միշտ ընդդէմ է աշխարհային բարեկեցութեան. նա չէ կարող համբերել, որ մարդը ճանաչէր իր հայրենիքը, այսինքն երկրի այս կամ այն կտորի վրայ հիմնէր իր կեանքի եւ ապրուստի գոյութիւնը: Եկեղեցականը հերքում է ներկայ աշխարհը. նրա հայրենիքը երկինքն է:

Ուրեմն մի ժողովուրդ, որ յանձնոած էր եկեղեցականի կրթութեանը, կարո՞ղ է մտածել այս բաները. — թէ ինքը մի ազգի որդի է, ունի իր առանձնութիւնները, իր պատմութիւնը եւ իր աւանդութիւնները, որոնք իր համար նոյնքան սուրբ են, որքան սուրբ է ազգային ինքնուրոյնութիւնը: Թէ իր նախնիքը թողել են իրան մի կտոր հող. դա իր նոիրական ժառանգութիւնն է. այն հողը պէտք է մշակել եւ նրանով քաղցր ու հանգիստ վարէ իր կեանքը:

Ես կը յայտնեմ քեզ միմիայն Վանայ նահանգի, կամ հին անունով Վասպուրականի, վիճակագրութիւնը, եւ կը տեսնես, թէ ժողովրդի հետ համեմատելով, որքան մեծ տեղ է բռնում եկեղեցական տարրը իր վանքերով եւ մենաստաններով»:

Նա հանեց իր ծոցից մի փոքրիկ յիշողութեան գրքոյկ եւ սկսեց կարդալ.

«Վանայ նահանգն ունի 24 գաւառ, որոնք շրջապատում են Բզնունեաց ծովակի չորս կողմը: Յիշեալ գաւառների մէջ բազմաթիւ հայաբնակ եւ խառնաբնակ գիւղերից այժմ շէն մնացած են 1652-ը. նրանց մէջ բնակւում են 43,750 հայ ընտանիք, որոնք բաղկացած են մօտ 350,000 հոգուց: Բացի գիւղաբնակներից, Վան քաղաքն ունի 20,640 հոգի հայ բնակիչ. կնշանակէ՝ ամբողջ Վանայ նահանգն ունի 370,640 հոգի հայ բնակիչներ: Յիշեալ գիւղորայքում եւ Վան քաղաքում կան 382 եկեղեցիներ, որոնք ունեն 270 քա-